Գործ թիվ ԵԴ2/11067/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

30 հունիսի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի <<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության՝ 05.06.2023թ. կայացված թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության՝ խնդրելով անվավեր ճանաչել <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի կողմից 05.06.2023թ. կայացված թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22/1 որոշումը:

Միաժամանակ <<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը միջնորդել է սույն գործը քննել դատական նիստում՝ նկատի ունենալով, որ հայցվորն իր խախտված իրավունքներն ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստում:

Հայցադիմումը 28.06.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 30.06.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ <<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա է բավարարման, և սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

CamScanner

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանող <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության՝ 05.06.2023թ. կայացված թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. <<Մեգիէլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարել.

թիվ ԵԴ2/11067/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 05-ին, ժամը 17:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**

CamScanner